Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 14 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գեղարդավանքի օժանդակ կառույցների նորոգում» ծրագիրը:

«Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու մասնակի վերանորոգում» ծրագիրը.

«Վորլդ Վիժն Ինտերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Հալիձոր համայնքի երիտասարդական կենտրոնի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում խաղահրապարակի ստեղծում», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սառնակունք համայնքի կենցաղի տան վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սալվարդ համայնքի խմելու ջրի արտաքին ցանցի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Բռնակոթ համայնքի մանկապարտեզի խաղահրապարակի ստեղծում», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Իշխանասար համայնքի ջրաբիացման համակարգի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քարահունջ համայնքի փողոցների գիշերային լուսավորության համակարգի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի հինգ համայնքներում իրականացվող ծրագրի մասին», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովազարդ համայնքի մանկապարտեզի վերանորոգում» և «Գյումրի քաղաքի թիվ 37 դպրոցի և թիվ 27 մանկապարտեզի վերանորոգում» ծրագրերը.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 04.03.2011 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2011 թվականի» ծրագիրը.

ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարդասիրական օգնություն Հայաստանին» ծրագիրը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: